

րեմն կասկած չկայ որ Ը դարուն Հայաստան կ'արտադրէր գորգեր՝ որոնք նշանաւոր էին օտարներու կամ գոնէ Արարացւոց մօտ: Արդ Կարին է դարուն կարճ ժամանակ մը միայն Արարացւոց ձեռքը մնաց, եւ իրապէս Հայաստանի մաս չէր կազմեր, այլ Բիւզանդական կայսրութեան, որուն իշխանութեան տակ էր է դարու մեծագոյն մասը ընթացքին, եւ այդպէս ալ մնաց մինչեւ Ժ-ԺԱ դար: Ուրեմն պարզ է որ Ը դարուն երբ հայերը Արարացւոց գորգ կու տային իրր իրենց երկրին բնահարկ, Կարինէն չէին բերեր այդ գորգերը, որ այն ատեն Բիւզանդական հողամաս էր: Հայաստանէն բնահարկ տրուած գորգերը նոյնիսկ Հայաստանի (Արարացւոց ենթակայ Հայաստանի) արտագրութիւն էին, խիստ հաւանօրէն Դուինի (Արտաշատ) մեծահամբաւ մանարաններուն եւ ներկարաններուն արտադրութիւնը: Դուինէ դատ Խոյ, Բերկրի, Արճէչ, Խլաթ, Նախիջեան, Բաղէչ, Վարդան եւն. Հայաստան նկատուած Արարացւոց ենթակայ հողամասերու ճարտարարուեստական այդ հայաքաղաքները՝ Ժ դարու Պարսիկ աշխարհագրի մը համաձայն, ղեւ համբաւաւոր էին իրենց կարծրահիւս գորգերուն համար, որոնց կու տայ «գիյլու-հաէյի գալի» կոչումը, ինչպէս նաեւ իրենց ազօթքի-գորգերու արտադրութեանց համար:

Ուրեմն «խալի»ի Կարինէն ծագելուն որ եւ է ենթադրութիւն այսպէս ինքնին կը չբնայ:

Խալի բառը ստուգարանելու համար գուցէ ստիպուած ըլլանք Պարսկերէն «քեալա» բառը նկատի ունենալ, որ ըստ Գէորգ պիլի Պալաթեցիի Պարսկահայ բառարանին՝ կը նշանակէ «կարասի եւ հանդերձ տան»: Կայ նաեւ «քեալէ» կամ «կեալէ», որուն մէկ նշանակութիւնն ալ է «խորդ, քորձ, չուվալ»: Ան կ'աւելցնէ որ «Խալի» — է բառ արէպի՝ դատարկ կամ թափուր» նշանակութեամբ:

Արդ, գորգին հոմանիչներուն շարքը կ'աւարտեմ ամփոփելով, որ կապերա իրր անխաւ գորգ (քիլիմ), հաւանարար դետնի ծածկոցի հնագոյն տեսակը, ծանօթ է եղած մեր մատենադրութեան մէջ Ե դարէն սկսեալ, եւ ըլլալով առեւտրական նիւթ՝ Հայ վաճառականները առաջին անգամ արտածած են կապերտը Եւրոպա, ապրանքին հետ անունն ալ ներկայացնելով, որմէ ծագած է ու ցարդ կը գործածուի իրր carpet: Ասիկա սակայն հոն պահուեցաւ իրր անուն խաւաւոր գորգին ալ:

Հայոց մօտ խաւաւոր գորգին հնագոյն անունը հաւանարար կապերտն ալ ըլլայ, սակայն առանձնայատուկ յորջորջումը բազմականն է մեր մատենադրութեան մէջ ծանօթ Դ դարուն իսկ: Դ դարէն մինչեւ Ժ դար բառը կը շարունակուի գործածուիլ, որուն հոմանիչ է արկա-